ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՔԱՋԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
N ՔՀ-ՀԲՄԱՇՁԲ-26/02-01

ք. Քաջարան «23» փետրվարի 2026թ.

Քաջարանի համայնքապետարանը,ի դեմս համայնքի ղեկավար Մանվել Փարամազյանի, որը գործում է «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Աժդանակ» ՍՊ ընկերությունը ,ի դեմս տնօրեն՝ Արման Մկրտչյանի, որը գործում է «Աժդանակ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Քաջարանի համայնքապետարանի հարակից այգու բարեկարգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում ՔՀ-ՀԲՄԱՇՁԲ-26/02 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալատուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 **Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են շինարարության թույլտվության տրման օրվանից հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 360 օր :**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել 1/մեկ/ օրվա ընթացքում:Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալատուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնոյությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եաղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը.

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 3 տարի: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N

596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 **Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 228 150 000 (երկու հարյուր քսանութ միլիոն մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, որից 38 025 000 (երեսունութ միլիոն քսանհինգ հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:**

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1.	Կապալառուն չունի շինարարական թափոնների տեղակայման վայրի համար թույլտվություն	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
2.	Շինարարական հրապարակից և/կամ տեղամասից հեռացված չեն աղբը, կենցաղային թափոնները և օտար առարկաները (աշխատանքների իրականացման ժամանակահատվածում, ինչպես նաև մինչև շինարարական օբյեկտը սահմանված կարգով շահագործման հանձնելը)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
3.	Ծառաթփային բուսականությունը հատված է (հատումը իրականացվում է միայն նախագծային փաստաթղթերով նախատեսված և/կամ համապատասխան լիազոր մարմնի կողմից տրված թույլտվության դեպքերում)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
4.	Ծառահատման և տեղափոխման ոչ ենթակա ծառերն ու թփերը ցանցապատված և պաշտպանված չեն	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
5.	Հասարակությանը իրազեկելու նպատակով անհրաժեշտ տեղեկատվական վահանակները տեղադրված չեն (ծրագծի սկզբում և վերջում)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
6.	Վտանգավոր տեղամասը ցանկապատված չէ, շինարարական տեղամասում պահպանված չեն ժամանակավոր երթևեկության կազմակերպման պահանջները (տեղադրված չեն նախազգուշացնող նշաններ, աշխատանքային տեղամասերը կահավորված չեն լուսաազդանշանային առկայծող լապտերներով և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
7.	Տեղամասերում շինարարական աղբը կուտակված է, թափոնները չեն տեղափոխվել հատուկ հատկացված վայրեր	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
8.	Շինարարությունում զբաղված ինժեներատեխնիկական, սպասարկման և բանվորական անձնակազմը չեն կրում հատուկ արտահագուստ և տեխնոլոգիական գործընթացներին համապատասխան պաշտպանիչ հանդերձանք (ձեռնոցներ, սաղավարտներ, ակնոցներ և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
9.	Շինարարական աշխատանքների ընթացքում չի պահպանվում օդի փոշոտվածության կանխարգելման պահանջները (փոշի առաջացնող աշխատանքների դեպքում շինարարական հրապարակը պարբերաբար չի խոնավեցվում ջրի շիթով և այլն)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով
10.	Շինարարական հրապարակում օգտագործվող շինարարական տեխնիկան և մեքենա-մեխանիզմները բավարար տեխնիկական վիճակում չեն (կան ավելորդ արտանետումներ, աղմուկ, վառելիքի և քսայուղերի արտահոսք)	Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն

հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված

հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Սույն պայմանագիրը կազմված է 7/յոթ/ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 ,N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Քաջարանի համայնքապետարան	«Աժդանակ» ՍՊԸ
ք. Քաջարան,Լեռնագործների 4	ՀՀ Սյունիքի մարզ,գ Լեռնաձոր,Բարիկավան փ 41/1
ՀՀ ՖՆ գործ. վարչություն	Բանկ Արդշինբանկ ՓԲԸ
Հ/հ 900312467104	Հ/հ 2470805536690000
հվհհ 09426045	ՀՎՀՀ 09425679
Համայնքի ղեկավար՝ Մանվել Փարամազյան	Տնօրեն՝ Արման Մկրտչյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1
« 23 » փետրվարի 2026թ. կնքված
N ՔՀ-ՀԲՄԱՇՁԲ-26/02-01 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

N	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավ. գինը	Գումարը
1	3	4	5	6	7
	Համայնքապետարանի հարակից այգի բարեկարգում				
	Շինարարական աշխատանքներ				
	Հողային աշխատանքներ աստիճաններ և հենապատեր				
1	IV կարգի գրունտների քանդում	մ³	116,4	0,95	110,88
2	III կարգի գրունտների քանդում	մ³	268,8	0,73	197,22
3	Կուտակված գրունտի ետլիցք, տոփանումով	մ³	228,1	0,48	109,43
	Ավելցուկային գրունտի բարձում ինքնաթափ և տեղափոխում 5կմ	մ³	114,1	4,72	538,96
	Աստիճան Ա1, Ա2			0,00	0,00
	Խիճի նախապատրաստական շերտի իրականացում 150մմ հաստ	մ³	2,10	18,04	37,87
	Աստիճանի իրականացում B20 դասի բետոնով	մ³	3,0	79,77	239,32
	Ամրան A III	տ	0,068	521,45	35,46
	Ամրան A I	տ	0,038	481,85	18,12
	Աստիճանի հենապատ Ա21, Ա22			0,00	0,00
	Բետոնի նախաշերտ B 12.5 դասի	մ³	0,44	46,21	20,33
	Ե/բ ժապավենային հիմքերի իրականացում B-25 դասի բետոնով	մ³	1,1	68,60	75,46
	Ամրան A III	տ	0,070	521,45	36,29
	Ամրան A I	տ	0,029	481,85	13,88
	Ուղղաձիգ ջրամեկուսացում 2 շերտ բիտումային մածիկով	մ²	21,20	1,34	28,34
	Ե/բ հենապատի իրականացում B25 դասի բետոնով	մ³	1,74	68,69	119,52
	Ամրան A III	տ	0,152	521,45	79,16
	Ամրան A I	տ	0,003	481,85	1,45
	Աստիճան Ա3, Ա3՝, Ա4, Ա5, Ա5՝, Ա6			0,00	0,00
	Խամքարաբետոնի իրականացում B15 դասի բետոնով	մ³	84,5	49,26	4 162,05
	Աստիճանի իրականացում B20 դասի բետոնով	մ³	15,0	79,77	1 196,62
	Ամրան A III	տ	0,411	521,45	214,37
	Ամրան A I	տ	0,207	481,85	99,65

	Ե/բ հատակ			0,00	0,00
	Խամքարաբետոնի իրականացում B15 դասի բետոնով	մ³	75,0	49,26	3 694,13
	Ե/բհատակի սալի իրականացում B20 դասի բետոնով	մ³	6,5	55,16	358,56
	Ամրան A III	տ	0,171	521,45	88,96
	Տրիբունա 1, 2, 3			0,00	0,00
	Խամքարաբետոնի իրականացում B15 դասի բետոնով	մ³	92,0	49,26	4 531,46
	Ե/բ տրիբունայի իրականացում B20 դասի բետոնով	մ³	5,1	55,16	281,33
	Ամրան A III	տ	0,430	521,45	224,07
	Ամրան A I	տ	0,022	481,85	10,41
	Ուղղաձիգ ջրամեկուսացում 2 շերտ բիտումային մաձիկով	մ²	100,00	1,34	133,67
	Յուղոտ կավ 200մմ հաստ	մ³	8,2	25,48	208,97
	Խիճ	մ³	11,00	18,04	198,39
	Միջին խոշորությաբ ավազ	մ³	11,0	13,03	143,35
	Ցամաքուրդային խողովակ Φ160մմ	մ	41,00	5,74	235,15
	PVC խողովակ Φ160մմ	մ	22,00	4,10	90,11
	Հողային աշխատանքներ ԾԱՂԿԱՄԱՆԻ ՀԵՆԱՊԱՏԵՐԻ /ԾՀ-1, ԾՀ-2/ - Ի			0,00	0,00
	IV կարգի գրունտների քանդում	մ³	43,0	0,95	40,96
	III կարգի գրունտների քանդում	մ³	100,0	0,73	73,37
	Կուտակված գրունտի ետլիցք, տոփանումով	մ³	120,0	0,48	57,57
	Ավելցուկային գրունտի բարձում ինքնաթափ և տեղափոխում 5կմ	մ³	23,0	4,72	108,64
	Ծաղկամանի հենապատ ԾՀ1, ԾՀ2			0,00	0,00
	Բետոնի նախաշերտ B 12.5 դասի	մ³	3,88	46,21	179,30
	Ե/բ ժապավենային հիմքերի իրականացում B-25 դասի բետոնով	մ³	10,2	68,60	699,70
	Ամրան A III	տ	0,613	521,45	319,44
	Ամրան A I	տ	0,167	481,85	80,37
	Ուղղաձիգ ջրամեկուսացում 2 շերտ բիտումային մաձիկով	մ²	108,00	1,34	144,36
	Ե/բ հենապատի իրականացում B25 դասի բետոնով	մ³	9,90	68,69	680,05
	Ամրան A III	տ	0,945	521,45	492,98
	Ամրան A I	տ	0,016	481,85	7,90
	Հենապատեր 1, 2, 3, 4, 5, 6, 7			0,00	0,00
	Բետոնի նախաշերտ B 12.5 դասի	մ³	5,90	46,21	272,65
	Ե/բ ժապավենային հիմքերի իրականացում B-25 դասի բետոնով	մ³	21,4	68,60	1 465,95
	Ամրան A III	տ	0,842	521,45	439,16

	Ամրան A I	տ	0,576	481,85	277,40
	Ուղղաձիգ ջրամեկուսացում 2 շերտ բիտումային մաձիկով	մ²	236,30	1,34	315,86
	Խամքարաբետոնի իրականացում B15 դասի բետոնով	մ³	3,0	49,26	147,77
	Ե/բ հենապատի իրականացում B25 դասի բետոնով	մ³	26,00	68,69	1 785,99
	Ամրան A III	տ	3,051	521,45	1 591,05
	Ամրան A I	տ	0,038	481,85	18,12
	Յուղոտ կավ 200մմ հաստ	մ³	8,0	25,48	203,87
	Խիճ	մ³	10,50	18,04	189,37
	Միջին խոշորությաբ ավազ	մ³	10,5	13,03	136,83
	Ցամաքուրդային խողովակ Φ160մմ	մ	37,70	5,74	216,22
	Նստարան 1			0,00	0,00
	Խամքարաբետոնի իրականացում B15 դասի բետոնով	մ³	11,0	49,26	541,81
	Նստարանի իրականացում B20 դասի բետոնով	մ³	1,2	79,77	95,73
	Ամրան A III	տ	0,150	521,45	78,11
	Ամրան A I	տ	0,004	481,85	1,73
	Ուղղաձիգ ջրամեկուսացում 2 շերտ բիտումային մաձիկով	մ²	25,00	1,34	33,42
	Օճանդակ շինության շինարարական աշխատանքներ			0,00	0,00
	Հողային աշխատանքներ			0,00	0,00
	IV կարգի գրունտների քանդում	մ³	74,0	0,95	70,44
	III կարգի գրունտների քանդում	մ³	172,6	0,73	126,60
	Կուտակված գրունտի ետլիցք, տոփանումով	մ³	72,6	0,48	34,82
	Ավելցուկային գրունտի բարձում ինքնաթափ և տեղափոխում 5կմ	մ³	173,9	4,72	821,48
	Շինարարական աշխատանքներ			0,00	0,00
	Խիճի նախապատրաստական շերտի իրականացում	մ³	14,49	18,04	261,33
	Բետոնի նախաշերտ B7.5 դասի	մ³	7,20	44,19	318,18
	Քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ բիտումային մաձիկով	մ²	72,60	1,34	97,04
	Խիճ 10-25մմ խոշորության	մ³	6,00	18,04	108,21
	Միջին խոշորությաբ ավազ	մ³	10,0	13,03	130,32
	Ցամաքուրդային խողովակ Φ160մմ	մ	10,00	5,74	57,35
	Յուղոտ կավ 200մմ հաստ	մ³	2,0	25,48	50,97
	Ջրարգելակ պարան	մ	36,00	5,94	213,86
	Ե/բ հիմքերի իրականացում B-25, W6 դասի բետոնով	մ³	17,7	102,13	1 807,64
	Ամրան A III	տ	1,019	521,45	531,51

	Ամրան A I	տ	0,357	481,85	171,90
	Միաձույլ ե/բ սյուների կառուցում B25, W6 դասի բետոնով	մ³	1,0	153,79	159,95
	Ամրան A III	տ	0,101	521,45	52,77
	Ամրան A I	տ	0,029	481,85	13,88
	Ե/բ պատերի ամրանավորում B25, W6 դասի բետոնով	մ³	20,7	124,81	2 581,13
	Ամրան A III	տ	2,107	521,45	1 098,61
	Ամրան A I	տ	0,201	481,85	97,03
	Քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ բիտումային մածիկով	մ²	200,50	1,34	268,00
	Ե/բ հեծանի իրականացում B25, W6 դասի բետոնով	մ³	3,4	131,94	445,96
	Ամրան A III	տ	0,267	521,45	139,02
	Ամրան A I	տ	0,111	481,85	53,27
	Ե/բ ծածկիիրականացում B25, W6 դասի բետոնով	մ³	5,9	146,64	869,60
	Ամրան A III	տ	0,751	521,45	391,82
	Լուսավորության հենասյուն -15 հատ			0,00	0,00
	Ե/բ հիմքերի իրականացում B-20 դասի բետոնով	մ³	7,5	69,41	520,61
	Ամրան A III	տ	0,278	521,45	144,70
	Ներդիր տարրերի իրականացում	տ	0,513	806,96	413,97
	Պողպատե էլեմենտներով հենասայն իրականացում 1.Պողպատե խողովակ 150x100x4-2.3մ 2.Պողպատե խողովակ 60x40x4-24,0մ 3. Թիթեղ -320x250x15 -1հատ 4. Թիթեղ -150x100x4 -1հատ 5. Թիթեղ -60x60x4 -4հատ	տ	2,62	878,27	2 298,48
	Ջրավազան-1			0,00	0,00
	Բետոնի նախաշերտ B 12.5 դասի	մ³	27,00	46,21	1 247,70
	Միաձույլ ե/բ հատակի իրականացում B25, W6 դասի բետոնով	մ³	46,0	107,07	4 925,38
	Ամրան A III	տ	3,813	521,45	1 988,29
	Միաձույլ ե/բ պատի իրականացում B25, W6 դասի բետոնով	մ³	45,0	139,23	6 265,15
	Ամրան A III	տ	3,629	521,45	1 892,34
	Ամրան A I	տ	0,085	481,85	40,76
	Ջրավազան-2			0,00	0,00
	Բետոնի նախաշերտ B 12.5 դասի	մ³	1,70	46,21	78,56
	Միաձույլ ե/բ հատակի իրականացում B25, W6 դասի բետոնով	մ³	5,4	107,07	578,20
	Ամրան A III	տ	0,631	521,45	328,88
	Խամքարի լիցք	մ³	1,80	6,71	12,08
	Միաձույլ ե/բ պատի իրականացում B25, W6 դասի բետոնով	մ³	5,0	139,23	696,13

	Ամրան A III	տ	0,558	521,45	290,97
	Ամրան A I	տ	0,015	481,85	7,10
	Կամուրջ			0,00	0,00
	III կարգի գրունտների քանդում	մ³	19,0	0,73	13,94
	IV կարգի գրունտների քանդում	մ³	8,0	0,95	7,62
	Կուտակված գրունտի ետլիցք, տոփանումով	մ³	18,0	0,48	8,64
	Ավելցուկային գրունտի բարձում ինքնաթափ և տեղափոխում 5կմ	մ³	9,0	4,72	42,51
	Խիճ	մ³	1,95	18,04	35,17
	Բետոնի նախաշերտ B 12.5 դասի	մ³	0,97	46,21	44,82
	Ե/բ հիմքերի իրականացում B-25 մակնիշի	մ³	4,60	81,38	374,37
	Ամրան A III	տ	0,097	521,45	50,68
	Ամրան A I	տ	0,078	481,85	37,46
	Երկշերտ քսվածքային ջրամեկուսացում բիտումային մածիկով	մ²	22,70	1,34	30,34
	Միաձույլ ե/բ սյուների կառուցում B25 դասի բետոնով	մ³	2,3	120,43	276,99
	Ամրան A III	տ	0,486	521,45	253,42
	Ամրան A I	տ	0,150	481,85	72,18
	Միաձույլ ե/բ պարզունակի իրականացում B25 դասի բետոնով	մ³	6,7	120,43	806,89
	Ամրան A III	տ	0,577	521,45	300,93
	Ամրան A I	տ	0,322	481,85	155,13
	Միաձույլ ե/բ շրջանակի իրականացում B25 դասի բետոնով	մ³	1,1	120,43	134,88
	Ամրան A III	տ	0,085	521,45	44,11
	Ամրան A I	տ	0,049	481,85	23,44
	Ե/բ ծածկի իրականացում B25 դասի բետոնով	մ³	2,80	113,28	317,18
	Ամրան A III	տ	0,345	521,45	179,85
	Ե/բ պատերի իրականացումB25 դասի բետոնով	մ³	0,6	93,14	55,88
	Ամրան A III	տ	0,091	521,45	47,40
	Ընդամենը				64 244,45
	Բարեկարգման աշխատանքներ				
	Քանդման աշխատանքներ	-	-		
1	Տարածքի ասֆալտե շերտի քանդում	մ³	32,9	5,86	192,77
2	Խճի շերտի քանդում	մ³	63,0	0,95	60,01
3	Բետոնե հատակի սալերի քանդում բետոնե կապակցող շերտով-տոմետ	մ²	402,0	0,73	291,51
4	Բազալտ հատակի սալերի քանդում բետոնե կապակցող շերտով	մ²	84,6	0,73	61,35
5	Բետոնե նստարանների քանդում նաև մետաղական տարրերի հիմքեր	մ³	40,7	12,20	496,64

6	Բետոնե եզրաքարերի քանդում	մ	119,5	1,41	168,68
7	Բազալտե եզրաքարերի քանդում	մ	220,0	1,41	310,55
8	Եզրաքարերի բետոնե հիմքի քանդում	մ³	18,1	12,20	220,86
9	Բետոնե հենապատերի քանդում հիմքերի հետ միասին	մ³	103,0	12,20	1 256,85
10	Հենապատի բազալտե երեսապատման քանդում	մ²	12,60	7,95	100,16
11	Բետոնե հատիկավող աստիճանի քանդում	մ	28,3	1,41	39,95
12	Ե/բ աստիճանների քանդում բազալտե երեսապատման հետ միասին	մ³	16,3	12,20	198,90
13	Տարածքում առկա մետաղական էլեմենտների ապամոնտաժում	տ	2,30	46,35	106,61
14	Ծառի չորացած արմատների կտրում հեռացում	հատ	42	3,17	132,96
15	Հուշարձանի ապամոնտաժում և պահեստավորում	հատ	2	45,86	91,72
16	Ցայտաղբյուրի ապամոնտաժում վերատեղադրման համար	հատ	1	19,65	19,65
17	Բազալտե ծաղկամանի ապամոնտաժում և պահեստավորում	հատ	15	6,55	98,27
18	Գովազդային վահանակի ապամոնտաժում վերատեղադրման համար	հատ	1	26,21	26,21
19	Նստարանի ապամոնտաժում և պահեստավորում նաև գրանիտե	հատ	15	45,86	687,90
20	Մետաղական կրպակի ապամոնտաժում և պահեստավորում	հատ	1	58,96	58,96
21	Լուսատուների ապամոնտաժում և պահեստավորում	հատ	15	23,59	353,78
22	Սուրճի պատրաստման սարքի ապամոնտաժում և պահեստավորում	հատ	3	32,76	98,27
23	III կարգի գրունտների քանդում	մ³	617,4	0,73	453,00
24	IV կարգի գրունտների քանդում	մ³	264,6	0,95	252,05
25	Քանդվող գրունտի տեղափոխում այգու տաւածքում հետագա համահարթեցման համար	մ³	882,0	1,11	974,82
26	Մացառուտների և թփուտների մաքրում	մ²	104,0	1,41	147,14
27	Տարածքի սիզամարգերի առկա որակյալ բուսահողի քերում և կուտակում հետագա փոման և հարթեցման համար	մ³	109,0	0,73	79,98
28	Տարածքում կուտակված շին աղբի մաքրում	տ	705,0	2,60	1 832,02
29	Շին. աղբի բարձում, տեղափոխում 5կմ	տ	705,0	2,62	1 850,06
30	Տակտիլային ցուցանակ 300x300x15 մմ	մ²	7,4	24,22	179,23
	Սալվածք, հատակներ	-	-		
1	Մայթի գրանիտե սալիկների h=3սմ տեղադրում (բարդ դեկորատիվ նկարվածքով)	մ²	1054,10	28,37	29 900,30
2	Ցեմենտավազային d=30մմ կապակցող շերտի իրականացում	մ²	1054,10	1,87	1 968,74

3	Ե/բետոնե սալի իրականացում 80մմ հաստ	մ³	74,40	55,16	4 104,12
4	Մետաղական ցանցի իրականացում Φ4 Вр-150*150մմ	մ²	930,0	1,73	1 604,53
5	Խճի տոփանված բնահող	մ³	105,4	3,23	340,69
6	Խճի նախապատրաստական շերտի իրականացում, h=10սմ հաստությամբ	մ²	14,20	1,41	20,01
7	Բիտումի լցաբաշխում 4.12տ /1000մ2/	տ	0,06	278,23	16,28
8	Խոշորահատիկ ա/բ h=5սմ	մ²	14,20	5,05	71,73
	Եզրաքարեր	-	-		
1	Բետոնե եզրաքարերի իրականացում В15 դասի բետոնով հիմքերի հետ միասին	մ³	18,10	60,56	1 096,21
2	Եզրաքարերի գրանիտե երեսապատում h=3սմ	մ²	109,10	42,47	4 633,81
	Հենապատեր և կամուրջ	-	-		
1	Հենապատի երեսապատում տրավերտինե սալերով 30մմ հաստ	մ²	208,70	29,14	6 082,05
2	Մետաղական ցանցի իրականացում Φ3 Вр-100*100մմ	մ²	208,7	1,17	244,36
3	Գրանիտե թասակի տեղադրում, 30մմ b=320մմ	մ²	65,6	41,86	2 747,39
4	Դեկորատիվ էլեմենտների իրկանացում b=100x180մմ թեթև բետոնե բլոկներից-10մ2	մ³	1,8	33,42	60,16
	Այլ աշխատանքներ	-	-		
1	Ծաղկամանի երեսապատում տրավերտինե սալերով 30մմ հաստ	մ²	52,10	29,14	1 518,33
2	Մետաղական ցանցի իրականացում Φ3 Вр-100*100մմ	մ²	52,1	1,17	61,00
3	Ծաղկամանի գրանիտե թասակի տեղադրում, 30մմ b=300մմ	մ²	21,0	41,86	877,82
4	Բազրիքի տեղադրում փոշեներկված h=900մմ, գործարանային արտադրանք	մ	66,50	32,45	2 157,61
5	Բազրիքի տեղադրում փոշեներկված h=600մմ, գործարանային արտադրանք	մ	41,00	23,73	973,03
6	Նստարան փոշեներկված գործարանային արտադրանք	հատ	8	233,51	1 868,10
7	Աղբաման պատրաստի գործարանային արտադրության	հատ	6	65,93	395,56
8	Ջրավազանի երեսապատում գրանիտե 40մմ սալիկներով, ամրացված ջրակայուն սոսնձով	մ²	29,50	35,08	1 034,93
9	Ջրավազանի երեսապատում գրանիտե 20մմ սալիկներով, ամրացված ջրակայուն սոսնձով	մ²	212,20	29,54	6 267,97
10	Մետաղական ցանցի իրականացում Φ3 Вр-100*100մմ	մ²	241,7	1,17	283,00
11	Ջրավազանի գրանիտե թասակի իրականացում, 30մմ b=450մմ L=114.9մ	մ²	51,7	41,86	2 164,40

12	Ջրավազանի գրանիտե թասակի իրականացում, 30մմ	մ²	3,6	41,86	151,12
13	Ջրավազանի հատակի գրանիտե սալիկների h=3սմ տեղադրում	մ²	146,10	28,12	4 108,92
14	Ջրամեկուսիչ շերտ երկտակ, ջրավազան	մ²	341,30	4,68	1 595,91
15	Տրբունայի և նստարանի երեսապատորմ տրավերտինե սալերով 30մմ հաստ	մ²	45,90	29,14	1 337,64
16	Մետաղական ցանցի իրականացում Փ3 Բp-100*100մմ	մ²	45,9	1,17	53,74
17	Տրբունայի երեսապատորմ գրանիտե սալերով 30մմ հաստ	մ²	54,40	42,47	2 310,53
18	Տրիբունայի և նստարանի փայտե մշակված և լաքապատված դետալների տեղադրում 50x50մմ չափերի -78.9մ	մ²	3,9	24,34	96,03
19	Հատակների, աստիճանների, հենապատերի և ծաղկամանների սալիկների մշակում և փայլեցում	մ2	1805,2	1,41	2 545,50
20	Հարթակների և աստիճանների երեսապատորմ գրանիտե սալերով 30մմ հաստ	մ²	162,50	42,47	6 901,87
21	Մետաղական ցանցի իրականացում Փ3 Բp-100*100մմ	մ²	162,5	1,17	190,26
22	Ցեմենտավազային d=30մմ կապակցող շերտի իրականացում -հարթակներ և աստիճաններ	մ²	162,50	1,87	303,50
	Հողային աշխատանքներ	-	-		
1	Կուտակված բուսահողի փոռում սիզամարգերում, համահարթեցումով ավելացումով 20% կարմիր ավազ	մ³	136,5	3,55	484,46
	Բարեկարգման աշխատանքներ	-	-		
1	Տույա h=1.5-2.0 մ,բրգաձև	հատ	14	47,32	662,46
2	Եղեվնի h=1.5-2.0 մ, արծաթափայլ	հատ	12	131,28	1 575,33
3	Ակացիյա h=2.0-2.5 մ, գնդաձև	հատ	24	31,48	755,45
4	Կիպրոս, (բիրյուչինա) h=1.0-1.5 մ, սյունաձև	հատ	613	6,13	3 758,34
5	Անյուտկա ծաղիկ	հատ	62	0,37	22,82
6	Գաճաճ վաչդ ծաղիկ	հատ	62	2,43	150,50
7	Գացանյա ծաղիկ	հատ	6	0,37	2,21
8	Սիզամարգերի ճիմապատում	մ²	907,8	0,72	655,43
	Օճանդակ շինության ճարտարապետական մաս				
	Դռներ, պատուհաններ				
1	Արտաքին ալյումինե ջերմային կամրջակով երկշերտ ապակեփաթեթով դուռ-ալյումինե շերտավարագույրով (ներառյալ օժանդակ կցամասերը)	մ²	3,08	125,56	386,74
	Հատակներ				

1	Ցեմենտավազային հարթեցնող d=30մմ շերտի պատրաստում հատակների տակ	մ²	24,70	1,87	46,13
2	Պրեսգրանիտե սալիկների իրականացում, ամրացված սոսնձով	մ²	24,70	12,90	318,74
3	Պրսգրանիտե շրիշակների իրականացում ամրացված սոսնձով h=80մմ	մ²	1,59	12,94	20,60
	Հարթ տանիք				
1	Իզոգամի իրականացում երկշերտ ջրամեկուսացում	մ²	27,0	4,76	128,48
2	Մեմբրան արմատապաշտպան	մ²	27,0	1,79	48,34
3	Ց/ավազե հարթեցնող շերտ 30մմ հաստ	մ²	27,00	1,80	48,69
4	Մետաղական ցանցի իրականացում Φ5 Вр-150*150մմ	մ²	27,0	1,73	46,58
	Ներքին հարդարում				
1	Պլաստիկե կախովի առաստաղի իրականացում մետաղական պրոֆիլի վրա	մ²	24,70	6,83	168,67
2	Պատերի և շեպերի լավորակ գաջե սվաղում	մ²	52,50	3,16	166,02
3	Պատերի և շեպերի ծեփամածկում և լատեքսային ներկում	մ²	52,50	1,52	79,57
4	Պատերի և շեպերի բարձրորակ սվաղում ցեմ/ավազային սվաղով մետաղական ցանցով	մ²	52,50	2,68	140,57
	Հեղամենք				110 594,17
	Կաթլային ոռոգման համակարգ				
1	Պոլիէթիլենե զոֆրե de16(Pe), խողովակներ (փորձարկումով)	մ	250,0	0,39	97,64
2	Լար 15x3մմ	մ	60,0	0,65	38,79
3	Լար 15x4մմ	մ	100,0	0,68	67,86
4	Լար 15x6մմ	մ	60,0	0,84	50,31
5	Օդահան 1"	հատ	1	13,08	13,08
6	Խամուտ 63x1"	հատ	1	3,42	3,42
7	Կոնտրոյլեր 12zone	հատ	1,0	237,62	237,62
8	Էլ կլապան 1"	հատ	11	38,42	422,65
9	Պոլիէթիլենե ձևավոր մասեր 63-25մմ	հատ	81	2,94	238,41
10	Ֆիլտր 1 1/4"disc	հատ	6	11,49	68,96
11	Valve box	հատ	10	23,76	237,62
12	Պոլիէթիլենե de63(Pe), PN8 խողովակներ (փորձարկումով)	մ	250,0	1,41	351,29
13	Պոլիէթիլենե de40(Pe), PN8 խողովակներ (փորձարկումով)	մ	315,0	1,12	351,90
14	Պոլիէթիլենե de32(Pe), PN8 խողովակներ (փորձարկումով)	մ	100,0	0,49	48,66
15	Պոլիէթիլենե de25(Pe), PN8 խողովակներ (փորձարկումով)	մ	35,0	0,80	27,90
16	Sprinkler Model 8, 10, 12, 15	հատ	140	3,17	443,56

17	Խցան 63-25	հատ	24	2,63	63,04
18	Խամուտ 25x1/2"	հատ	12	2,15	25,82
19	Խամուտ 32x1/2"	հատ	36	2,31	83,15
20	Խամուտ 40x1/2"	հատ	91	2,63	239,01
21	Բաչկա 1/2x1/2"M	հատ	139	0,24	33,03
22	Իզալացիա 63մմ խողովակի համար	մ	6,0	2,40	14,38
23	Ֆիլտր 2"	հատ	1	15,93	15,93
24	Միացում 63x/2" F	հատ	2	3,74	7,47
	Ընդամենը				3 181,50
	Էլեկտրականություն				
1	Մետաղական արկղ համալիր IP54 տեսակի 1200x750x300մմ	հատ	1	109,84	109,84
2	Ավտոմատ անջատիչ 3ֆ, 400Ա	հատ	1	288,24	288,24
3	Ավտոմատ անջատիչ 3ֆ, 300Ա	հատ	1	193,19	193,19
4	Ավտոմատ անջատիչ 3ֆ, 100Ա	հատ	1	82,30	82,30
5	Ավտոմատ անջատիչ 3ֆ, 6Ա	հատ	5	15,77	78,83
6	Ավտոմատ անջատիչ 1ֆ, 6Ա	հատ	3	6,26	18,78
7	Մագնիսական թողարկիչ 10Ա	հատ	1	11,01	11,01
8	Փոխակերպիչ միֆազ եռադիրք 10Ա	հատ	2	16,56	33,11
9	Ֆոտոռելե դատչիկով	հատ	1	22,89	22,89
10	Լուսադիմադրություն	հատ	1	5,54	5,54
11	Հաղորդաձող պղնձե L=75մմ, 30x5մմ	հատ	3	1,27	3,80
12	Din քանոն	մ	0,75	6,34	4,75
13	Մետաղական հարթաթիթեղ 30մմ հաստ	մ	2,1	2,22	4,66
14	Մալուխ պղնձե ջիղերով, մեկուսացված, հատվածքը 5x1,5մմ2 ВВГ	մ	510,0	0,83	422,43
15	Մալուխ պղնձե ջիղերով, մեկուսացված, հատվածքը 3x1,5մմ2 ВВГ	մ	377,0	0,62	234,90
16	Ծայրակալ պղնձե 1.5մմ2	հատ	68	1,03	70,02
17	LED լուսատու 60վտ, IP44	հատ	30	66,52	1 995,70
18	LED լուսատու 12վտ, IP44	հատ	51	15,83	807,38
19	LED լուսատու 10վտ, IP44	հատ	101	12,66	1 278,93
20	LED լուսատու 18վտ, IP44	հատ	33	20,90	689,67
21	LED լուսատու 8վտ, IP67, L=5մ	հատ	65	19,00	1 234,95
22	Մետաղական տուփախողովակ թափանցիկ L=3մ, 100x200մմ	մ	110	3,49	383,36
23	Խողովակ PND արտաքրական թև 450 SN34 կարմիր Φ20մմ	մ	887,0	0,64	569,41
24	Ճյուղավորիչ տուփ	հատ	75	0,27	20,20
25	Խրամուղու փորում մալուխի տեղադրման համար	մ³	214,0	0,73	157,02
26	Ավազի նախ. շերտի իրականացում	մ³	45,0	6,34	285,32
27	Ետլիցք կողալիցքի մշակված գրունտներից, տոփանումով	մ³	169,0	0,48	81,08

	Հողանցման ցանց	-	-		
1	Ուղղահայաց հողանցում պողպատե անկյունային 50x50x5, L=2,5մ	հատ	8	9,66	77,27
2	Հորիզոնական հողանցում շերտավոր պողպատ 40x4մմ	մ	20,0	1,21	24,11
3	Խրամուղու փորում	մ³	3,0	3,53	10,59
4	Հողի հետլիցք փոսորակներում	մ³	3,0	1,33	3,99
	Ընդամենը				9 203,24
	Արտաքին ջրամատակարարման ցանց				
1	Պոլիէթիլենե (PE) եռակցվող խողովակների de63, PN=1,0 ՄՊա մոնտաժում խրամուղիներում, փորձարկումով	մ	50,0	1,39	69,51
2	Պոլիէթիլենե (PE) եռակցվող խողովակների de32, PN=1,0 ՄՊա մոնտաժում խրամուղիներում, փորձարկումով	մ	52,0	0,68	35,52
3	Պոլիէթիլենե (PE) եռակցվող խողովակների de25, PN=1,0 ՄՊա մոնտաժում խրամուղիներում, փորձարկումով	մ	18,0	0,62	11,15
4	Խրամուղու մշակում	մ³	58,3	3,53	205,74
5	Ավազի նախ. շերտի իրականացում, h=10 սմ	մ³	4,8	6,34	30,43
6	Խրամուղու ետլիցք	մ³	53,5	1,33	71,23
7	Ջրի դիտահորի մոնտաժում 800x800մմ -2հատ	մ³	1,20	115,72	138,87
8	Դիտահորի մետաղական դռնակ 600x600մմ	հատ	1	77,23	77,23
9	Դիտահորի միացման մետաղական մասեր	տ	0,010	806,96	8,07
10	Միացում գործող գծին	տեղ	1	2,52	2,52
11	Սողնակային փական 2"	հատ	1	33,74	33,74
12	Մետաղ-Պոլիէթիլենային կցորդիչ մետաղական արտաքին պարուրակով Φ63-2"մմ	հատ	2	25,12	50,24
13	Կոմբինացված կցամասեր Φ63-2"մմ	հատ	2	13,15	26,30
14	Պոլիէթիլենե ձևավոր մասեր 63մմ	հատ	98	3,74	366,07
15	Ջրի ֆիլտր 2"	հատ	1	14,12	14,12
16	Մետաղական կարճախողովակ 400մմ, 2"	հատ	2	5,32	10,64
17	Հետադարձ փական 2", մոնտաժումով	հատ	1	16,32	16,32
	Ընդամենը				1 167,70
	Արտաքին ջրահեռացման ցանց				
1	Կոյուղու ծալքավոր խողովակների տեղադրում Φ=160, փորձարկումով	մ	10,0	6,01	60,12
2	Պոլիվինիքլորիդե կոյուղու խողովակների տեղադրում Φ=110, փորձարկումով	մ	96,0	2,34	224,48
3	Պոլիվինիքլորիդե կոյուղու խողովակների տեղադրում Φ=50, ռետինե սեղմիչ օղակներով փորձարկումով	մ	28,0	2,20	61,65

Հավելված N 3

«23» փետրվարի 2026թ. կնքված

N ՔՀ-ՀԲՄԱՇՁԲ-26/02-01 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ
դրամ

Աշխատանքի			
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026-2027թթ-ին՝ յուրաքանչյուր անգամ երկկողմանի հաստատված կատարողական ակտերի, ընդունման-հանձնման արձանագրությունների, ակտերի և այլ փաստաթղթերի հիման վրա, այդ թվում**
			Ընդամենը
1.	45221142/2	Քաջարանի համայնքապետարանի հարակից այգու բարեկարգում	228 150 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Քաջարանի համայնքապետարան

ք. Քաջարան,Լեռնագործների 4

ՀՀ ՖՆ գործ. վարչություն

Հ/հ 900312467104

հվհհ 09426045

Համայնքի ղեկավար՝ Մանվել Փարամազյան

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Աժդանակ» ՍՊԸ

ՀՀ Սյունիքի մարզ,գ Լեռնաձոր,Բարիկավան փ 41/1

Բանկ Արդշինբանկ ՓԲԸ

Հ/հ 2470805536690000

ՀՎՀՀ 09425679

Տիգրան Միհրան Մկրտչյան

/ստորագրություն/

Կ.Տ